ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

01.01-31.03.2021 թվականի իրականացված միջոցառումների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ (աճողական)

Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ

(հազար դրամ)

Ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման NN կոդերի համարակալում	Պետության կողմից տրվող հատկացումների հաշվին ստացվող եկամուտների և իրականացվող ծախսերի			Պարզաբանումներ և բացատրություններ ծախսման նպատակի վերաբերյալ
		Հաստատված նախահաշվի ցուցանիշները	Փաստացի կատարողականը	Գերածախս կամ թերիրացում (փակագծերում գերածախս, դրական նշանով թերիրացում)	
1	2	3	4	5=3-4	6
Ա. ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ		**70202.3**	**70202.3**	**0.0**	
Բ. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ (տող1+տող2+տող3) այդ թվում՝		**278818.4**	**278818.4**	**0.0**	
1. Դրամաշնորհներ ընդամենը, որից՝		**278818.4**	**278818.4**	**0.0**	
1.1. Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ				0.0	
1.2.Դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից		278818.4	278818.4	0.0	
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբսիդիաներ				**0.0**	
3. Այլ եկամուտներ, որից՝		**0.0**	**0.0**	**0.0**	
3.1. Կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալությունից				0.0	
3.2. Կազմակերպության տնօրինմանը հանձնված հողի վարձակալությունից				0.0	
3.3.Եկամուտներ ապրանքների մատակարարումից և/կամ ծառայությունների մատուցումից ընդամենը, այդ թվում՝		**0.0**	**0.0**	**0.0**	
- ծառայությունների մատուցումից				0.0	
- ապրանքների մատակարարումից կամ իրացումից				0.0	
- այլ եկամուտներ				0.0	
Գ. ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տողԱ+տողԲ)	**x**	**349020.7**	**349020.7**	**0.0**	

1	2	3	4	5=3-4	6
Դ.ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող1+տող2+տող3)՝ այդ թվում՝	**x**	**349020.7**	**290136.9**	**58883.8**	
Դ1.Կազմակերպության աշխատողների ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝	**x**	**244468.1**	**213053.9**	**31414.2**	
Դ1.1 Աշխատանքի վարձատրություն	**x**	**244468.1**	**213053.9**	**31414.2**	
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	**4111**	244468.1	213053.9	31414.2	մարզային կառույցների մարտ ամսվա հաշվեգրած աշխատավարձն է, որը վճարվել է ապրիլին
-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	**4112**			0.0	
Դ2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	**x**	**43777.7**	**17668.0**	**26109.7**	
Դ2.1. Շարունակական ծախսեր		**15605.2**	**13434.8**	**2170.4**	
-գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	**4211**	0.0	0.0	0.0	
-էներգետիկ ծառայություններ	**4212**	10586.1	10576.5	9.6	
-Կոմունալ ծառայություններ	**4213**	394.9	153.3	241.6	Փաստագի կատարողականի հիման վրա
-Կապի ծառայություններ	**4214**	4403.2	2670.0	1733.2	Փաստագի կատարողականի հիման վրա
-Ապահովագրական ծախսեր	**4215**	116.0	0.0	116.0	2 ավտոմեքենա շահագործվում է ԱԻՆ-ի կողմից, ապահովագրությունը չի հասանելիս տեխնիկական ապահովագրում
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	**4216**	105.0	35.0	70.0	տարբերությունը փոխանցվել է ապրիլ ամսին
-Այլ ծախսեր	**4217**	0.0	0.0	0.0	
Դ2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր	**x**	**3051.9**	**1056.9**	**1995.0**	
-Ներքին գործուղումներ	**4221**	2166.9	1056.9	1110.0	Փաստագի կատարողականի հիման վրա
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	**4222**	885.0	0.0	885.0	Կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված գործ. չի իրականացվել
-Այլ (գործուղման հետ կապված) տրանսպորտային ծախսեր	**4229**		0.0	0.0	
Դ2.3. Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	**x**	**1100.5**	**91.2**	**1009.3**	
-Վարչական ծառայություններ	**4231**			0.0	
-Համակարգչային ծառայություններ	**4232**	80.0	0.0	80.0	աշխատանքը հնարավոր է եղել իրականացնել հաստիքային աշխատողի միջոցով
-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	**4233**	18.0	0.0	18.0	փոխանցվել է ապրիլ ամսին
-Տեղակատվական ծառայություններ	**4234**	30.0	0.0	30.0	ծառայությունը նախատեսվում է կատարվել ապրիլ ամսին
-Կառավարչական ծառայություններ	**4235**	0.0	0.0	0.0	
- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	**4236**	0.0	0.0	0.0	
-Ներկայացուցչական ծախսեր	**4237**	300.0	0.0	300.0	ծախսը ճանաչվել է մարտ ամսին սակայ փոխանցվել է ապրիլ ամսին 270.0
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	**4239**	672.5	91.2	581.3	ծախսը ճանաչվել է մարտ ամսին սակայ փոխանցվել է ապրիլ ամսին 333.0
Դ2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում	**x**	**2300.0**	**32.5**	**2267.5**	
-Մասնագիտական ծառայություններ	**4241**	2300.0	32.5	2267.5	շեղումը պայմանավորված է գնման գործընթացով
Դ2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	**x**	**1500.0**	**70.5**	**1429.5**	
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	**4251**	200.0	0.0	200.0	Կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված գործ. չի իրականացվել

1	2	3	4	5=3-4	6
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	1300.0	70.5	1229.5	Փաստացի կատարողականի հիման վրա
Դ2.6. Նյութեր	**x**	**20220.1**	**2982.1**	**17238.0**	
-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	1170.0	501.6	668.4	շեղումը պայմանավորված է գնման գործընթացով
-Գյուղատնտեսական ապրանքներ	4262	0.0	0.0	0.0	
-Վերապատրաստման և ուսուցման նյութեր	4263	0.0	0.0	0.0	
-Տրանսպորտային նյութեր	4264	9525.0	169.2	9355.8	փոխանցվել է ապրիլի 7-ին 11294.0
-Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր	4265	0.0	0.0	0.0	
-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266	0.0	0.0	0.0	
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	850.9	118.8	732.1	Փաստացի կատարողականի հիման վրա
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	8674.2	2192.5	6481.7	շեղումը պայմանավորված է գնման գործընթացով
Դ3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**x**	**60774.9**	**59415.0**	**1359.9**	
Դ3.1 Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարարական) կազմակերպություններին	**x**			**0.0**	
Դ3.2 Բյուջեներ կատարվող վճարումներ	**x**	**60774.9**	**59415.0**	**1359.9**	
Դ3.2.1.Հայաստանի Հանրապետության պետական բյուջե այդ թվում		60757.8	59394.8	1363.0	չի գերազանցել 10 % շեմը
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	**4822**	***60717.8***	***59349.8***	***1368.0***	
ԱԱՀ	x	60717.8	59349.8	1368.0	
Շահութահարկ	x	0.0	0.0	0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0	0.0	0.0	
Այլ հարկեր (նշել տեսակը)	x	0.0	0.0	0.0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	**4823**	***40.0***	***45.0***	***(5.0)***	
Պետ. Տուրք	x	40.0	45.0	(5.0)	
նշել ըստ տեսակների	x	0.0	0.0	0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0	0.0	0.0	
Դ3.2.2.Համայնքների բյուջեներ	x	**17.1**	**20.2**	(3.1)	
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	**4822**	***0.0***	***0.0***	***0.0***	
նշել ըստ տեսակների	x	0.0	0.0	0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0	0.0	0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0	0.0	0.0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	**4823**	***17.1***	***20.2***	***(3.1)***	
Գույքահարկ	x	0.0	0.5	(0.5)	
Աղբահանություն	x	17.1	19.7	(2.6)	
նշել ըստ տեսակների	x			0.0	
Դ3.3 Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	
				0.0	
Դ3.4. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**4861**	**0.0**	**0.0**	**0.0**	
նշել ըստ տեսակների	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	

1	2	3	4	5=3-4	6
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Ե. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (տող9 -տող9)		**0.0**	**58883.8**	**(58883.8)**	
Զ. ԶՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ (տող Զ2 - տող Զ1)		**0.0**	**0.0**	**0.0**	
Զ1.Կապիտալ ակտիվների ձեռքբերում այդ թվում՝	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	
Զ1.1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	
-Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111			0.0	
-Շենքերի և շինությունների կառուցում	5112			0.0	
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113			0.0	
-Տրանսպորտային սարքավորումներ	5121			0.0	
-Վարչական սարքավորումներ	5122			0.0	
-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129			0.0	
-Աճեցվող ակտիվներ	5131			0.0	
-Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132			0.0	
-Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	5133			0.0	
-Նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			0.0	
Զ1.2. ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	
-Հող	5411			0.0	
-Ընդերքային ակտիվներ	5421			0.0	
-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431			0.0	
-Ոչ նյութական ոչ արտադրական ակտիվներ	5441			0.0	
Զ2.Կապիտալ ակտիվների վաճառքից մուտքեր	**x**			**0.0**	
Է. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) (տող Ե + տող Զ)	**x**	**0.0**	**58883.8**	**(58883.8)**	

09.04.2021թ.

Տնօրեն _____ անուն, ազգանուն
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____ անուն, ազգանուն
(ստորագրություն)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ" ծրագրի Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում միջոցառման գծով առաջընթացի /կատարողական/ աղյուսակներ

Ծրագրի դասիչը 1016

Ծրագրի անվանումը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ

Ծրագրի միջոցառումները

Ծրագրի դասիչը՝	1016
Միջոցառման դասիչը՝	11004
Միջոցառման անվանումը՝	Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում
Նկարագրությունը՝	Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգի տեղեկատվության տրամադրման
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում
Միջոցառումն իրականացնողի անվանումը՝	Մասնագիտացված կազմակերպություններ

Արդյունքի չափորոշիչներ	ՊԼԱՆԱՅԻՆ ցուցանիշներ				ՓԱՍՏԱՑ		Ծրագրային ցուցանիշից՝փաստացի կատարողականի շեղման պարզաբանումը
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Ծրագրային ցուցանիշից փաստացիի շեղումը	
Օդերևութաբանական դիտարկումներ /հատ/	33840	68056	102648	137240	33120	720	Կորոնավիրուսի համաճարակով և եղանակային ամբարենպստ պայմանների հետևանքով ճանապարհների անանցանելիությամբ պայմանավորված, օդերևութաբանական դիտարկումների ցանցը վերջին ամիսներին աշխատել է ոչ լիակատար և շեղումը պայմանավորված է որոշակի ժամկետով սահմանված հարկադիր պարապուրդով
Աերոլոգիական դիտարկումներ, փարեկան դիտարկումների թիվը ռադիոզոնդերի առկայության դեպքում	90	181	273	365	64	26	Դիտարկումների կատարման համար բյուջետային հատկացումներ չկան,դիտարկումները իրականացվել են ըստ անհրաժեշտության՝ Համաշխարհային հիդրոօդերևութաբա նական կազմակերպության կողմից տրամադրված օգնությունների շնորհիվ,իսկ թերակատարումը պայմանավորված է տեխնիկայի անսարքության պատճառով
Հելիոերկրաֆիզիկական դիտարկումներ, որից	3994	8271	12595	16795	3994	0	
ակտինոմետրիական դիտարկումներ, դիտարկումների թիվը	3150	6335	9555	12775	3150	0	
օզոնոմետրիական դիտարկումներ, դիտարկումների թիվը	844	1936	3040	4020	844	0	
Ագրոօդերևութաբանական դիտարկումներ /հատ/	431	6948	13241	13851	431	0	
Հիդրոլոգիական դիտարկումներ /հատ/	17002	36980	56922	74766	17002	0	
Ռադիոլոգիական դիտարկումներ, որից	2880	5792	8736	11680	2880	0	
գամմա ֆոնի չափումներ, դիտարկումների թիվը	2790	5611	8463	11315	2790	0	
Ռադիոակտիվ փոշու ամենօրյա գումարային բետտա ակտիվության չափումներ Երևանում/ այդ թվում ՀԱԷԿ-ի շրջակայքի 30 կմ-ոց գուտուց բերված ջրի, օդի, հողի նմուշների գումարային բետտա ռադիոակտիվության չափումներ	90	181	273	365	90	0	
Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործություն/կատարման հաճախականությունն ըստ պրոցեսի առկայության/ /մարտից մինչև հոկտեմբեր/	31	122	214	221	0	31	Կարկտավտանգ երևույթների բացակայության պատճառով
Հակակարկտային տեխնիկական միջոցների կոնսերվացման և ապակոնսերվացման,պրոֆիլակտիկ և ընթացիկ աշխատանքներ /մնացած	4	4	4	4	4	0	
Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության ստանդարտներին համապատասխանության ապահովման,կանխատեսումների արդարացվածության տոկոսը ոչ պակաս 80%-ից, տոկոս	85	85	85	85	85	0	
Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի իրականացում՝ << 6 ջրավազանային կառավարման տարածքի 14 գետավազանի 53 ջրային օբյեկտի 144 դիտակետում ջրերի որակը բնութագրող 40-60 աղտոտիչների վերաբերյալ տվյալներ, ցուցանիշ	5500	18660	33700	43420	5500	0	
Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի իրականացում՝ << 10 քաղաքում 15 դիտակայանում և 188 դիտակետում օդի աղտոտվածությունը բնութագրող 2-6 աղտոտիչների վերաբերյալ տվյալներ, ցուցանիշ	18800	37600	56400	75300	18800	0	
Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիտորինգի իրականացում՝ Արաքս գետի ջրի որակի և հատակային նստվածքների աղտոտիչների վերաբերյալ տվյալներ, ցուցանիշ	160	840	1520	2040		160	Փաստացի և պլանային ցուցանիշների անհամապատասխանությունը պայմանավորված է եղանակային ամբարենպստ պայմանների հետևանքով ճանապարհների անանցանելիությամբ: Պակասը կլրացվի 2-
Հողերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում, ցուցանիշ	0	5000	10000	10000	0	0	

Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ (EMEP) ծրագրի շրջանակներում Հայաստանում օդի անդրսահմանային աղտոտման մոնիթորինգի	675	3915	7155	10395	675	0	
Սփոռերկրյա քաղցրահամ ջրերի քանակի մոնիթորինգի իրականացում՝ << 6 ջրավազանային կառավարման տարածքի 100 ջրաղբյուրում հիդրոերկրաբանական դիտարկումների (ջրի մակարդակ (ճնշում), ծախս, ջերմաստիճան և դիտակետերի տեղազննում) վերաբերյալ տվյալներ, ցուցանիշ	4306	8623	12932	17245	4306	0	
Սփոռերկրյա քաղցրահամ ջրերի որակի մոնիթորինգի իրականացում՝ << 6 ջրավազանային կառավարման տարածքի 40 ջրաղբյուրում ջրերի որակը բնութագրող 30-40 աղտոտիչների վերաբերյալ տվյալներ, ցուցանիշ	0	1800	1800	3600	0	0	
Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող և ջուր) կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակների մոնիթորինգի իրականացում, ցուցանիշ	75	150	225	300	0	75	Տվյալ ցուցանիշի իրականացումը բաղկացած է 4 մասից, պայմանավորված կորոնավիրուսի համաճարակով և դրա հետևանքներով իրականացվել է աշխատանքների միայն 1-ին մասը, աշխատանքների լիարժեք կատարումը կիրականացվի մինչև տարեվերջ
Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման ուսումնասիրվող օբյեկտների և հեռացման վայրերի թիվ, հատ	6	14	22	31	6	0	
Ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրություն և վերլուծություն, առաջացած թափոնների հաշվառում և դասակարգում, դրանց հիման վրա հաշվետվությունների կազմում, հաշվետվությունների ընդհանուր թիվ, հատ	0	0	0	1050	0	0	
Միջազգային լավագույն փորձի և վերլուծությունների արդյունքում մշակված տեխնոլոգիաների և տեղեկատվական աղբյուրների թիվ, հատ	5	12	18	25	5	0	
Շրջակա միջավայրի նախարարության սպասարկվող համակարգիչների, կայքի և տեղային ցանցերի թիվ, հատ	253	253	254	254	253	0	
Շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների ամփոփում, այդ թվում՝ շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ եռամսյակային և տարեկան տեղեկագրեր, մակերևութային ջրերի որակի, սփոռերկրյա ջրերի քանակի և որակի, մթնոլորտային օդի որակի տվյալների տարեկան ամփոփագիր, հատ	1	2	3	8	1	0	
Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) ԿՕԱ-ների մնացորդային քանակների որոշում՝ համաձայն Ստոկհոլմի Կոնվենցիայի, տոկոս	100	100	100	100	25	75	տվյալ ցուցանիշի իրականացումը բաղկացած է 4 մասից, պայմանավորված կորոնավիրուսի համաճարակով և դրա հետևանքներով իրականացվել է աշխատանքների միայն 1-ին մասը, աշխատանքների լիարժեք կատարումը կիրականացվի մինչև տարեվերջ
Ցուցանիշների համապատասխանության տեսակարար կշիռը (արդյունավետությունը) ծրագրով հաստատված մոնիթորինգային ցուցանիշներին, տոկոս	100	100	100	100	100	0	
Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքի, սպասարկվող համակարգչային տեխնիկայի, տեղային ցանցերի անխափան աշխատանքի	95	95	95	95	95	0	
Անտառներում դիտարկումներ և ուսումնասիրությունների քանակ, հատ	5	20	35	45	5	0	
Անտառային տարածքներում իրականացված պետական մոնիտորինգի վերաբերյալ հաշվետվությունների հրապարակումների թիվը, հատ	1	4	7	10	1	0	
Անտառտնտեսությունների և բնության հատուկ պահպանվող տարածքների ընդգրկվածության աստիճանը, տոկոս	10	40	60	40	10	0	
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	278,818.4	688,845.4	1,098,872.40	1,640,108.10	278818	0	

"Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի Կենտրոն" ՊՈԱԿ տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան
ստորագրություն (Ա.Հ.Ա.)

Կ.Տ.

«07» «ապրիլի» 2021թ.

Հաշվապահական հաշվառման բաժնի պետ-ուժանող հաշվապահի

Կ.Մուրադյան
ստորագրություն (Ա.Հ.Ա.)

Կատարող Գ. Մելքոնյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի
ՀՀ-ՇՄՆ-ԴՇ-21/02 պայմանագրով 2021թ 1-ին եռամսյակի ընթացքում նախատեսված
միջոցառումների կատարման մասին

1. ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Օդերևութաբանական դիտարկումներ և կանխատեսումներ

Հաշվետու ժամանակահատվածում մթնոլորտում և գետնի մակերևույթին տեղի ունեցող ֆիզիկական երևույթների ուսումնասիրման նպատակով օդերևութաբանական դիտարկումները կատարվել են Հանրապետության տարածքի 46 օդերևութաբանական (այդ թվում՝ 6 բարձրլեռնային դժվարամատչելի և 3 մասնագիտացված) կայաններում՝ լրիվ ծրագրով, իսկ 26 հիդրոլոգիական կայաններում՝ կրճատ ծրագրով /միայն օդի ջերմաստիճանի, տեղումների, մթնոլորտային երևույթների և ձյան ծածկի բարձրության/, Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան 3 ժամը մեկ անգամ 00 ժամից սկսած (Գրինվիչի ժամանակով), իսկ մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի նկատմամբ՝ շուրջօրյա: Դիտակումներն իրականացվել են օդերևութաբանական բոլոր տարրերի նկատմամբ:

Կայաններից ստացված տեղեկատվությունը ենթարկվել է վերլուծական ստուգման և հանձնվել մուտքագրման բաժին՝ «CLICOM» ծրագրով օդերևութաբանական տվյալների բանկ մուտքագրման նպատակով:

Շահագրգիռ կազմակերպություններն ապահովվել են օդերևութաբանական ռեժիմային տվյալներով:

Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 18 նախազգուշացում օդերևութաբանական վտանգավոր երևույթների վերաբերյալ:

h/h	Երևույթի տեսակը	Չափի միավոր	անբարենպաստ երևույթի քանակը	վտանգավոր երևույթի քանակը
1.	քամի	դեպք	45	2
2	մառախուղ	դեպք	54	14
3	ձյուն	դեպք	14	3
4	անձրև	դեպք	3	-
5	կարկուտ	դեպք	-	-
6	Սաստիկ շոգ	դեպք	-	-

1.2. Աերոլոգիական դիտարկումներ

Հաշվետու ժամանակաշրջանում բաց է թողնվել 64 ռադիոզոնդ: Ռադիոզոնդարկման աշխատանքները թերակատարվել են տեխնիկական խնդիրների պատճառով:

Միաժամանակ կայանում կատարվել են լրիվ ծրագրով օդերևութաբանական և ռադիոմետրիական դիտարկումներ:

1.3. Հելիոերկրաֆիզիկական դիտարկումներ

ա/ Օզոնոմետրիա

Օզոնոմետրիական դիտարկումներն իրականացվել են Ամբերդ բարձրլեռնային դժվարամատչելի օդերևութաբանական կայանում, Դոբսոնի սպեկտրոֆոտոմետրով՝ օրվա ցերեկային ժամերին պարզ երկնքի դեպքում՝ 3 - 5 անգամ:

Ամբերդ օդերևութաբանական կայանից ստացված դիտանյութերի արդյունքները սահմանված կարգով մշակվել և ուղարկվել են ՀՕԿ-ի Օզոնային և ուլտրամանուշակագույն ճառագայթման տվյալների համաշխարհային կենտրոն (WOUDC):

բ/ Ակտինոմետրիա

Ակտինոմետրական դիտարկումներն իրականացվել են 6 կայաններում՝ Երևան-ագրո, Տաշիր, Գյումրի, Մարտունի, Սևան, Ամբերդ: Դիտարկումները կատարվել են օրվա ցերեկային ժամերին 3 ժամը մեկ անգամ /Գրինվիչի ժամանակով ժամը 03.30, 06.30, 09.30, 12.30, 15.30/, գիշերային ժամերին՝ մեկ անգամ /Գրինվիչի ժամանակով ժամը 21.30-ին/, արեգակնային կարճալիք ուղիղ, ցրված ու անդրադարձված ճառագայթման և ճառագայթային հաշվեկշռի վերաբերյալ, կատարվել է նաև գումարային երկարալիք ճառագայթման հաշվեկշռի և ազդեցության մակերևույթի ալբեդոյի հաշվարկ:

Կատարվել է Հայաստանի բոլոր մարզերի համար ուլտրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության բնութագրիչների մշակում՝ ինդեքսների տեսքով, ինչպես նաև Արեգակի ակտիվության ու գեոմագնիսական դաշտի վիճակի մասին տեղեկատվության մշակում՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ամենօրյա տեղեկագրի և ԶԼՄ-ների համար:

1.4. Ագրոօդերևութաբանական դիտարկումներ և կանխատեսումներ

Ագրոօդերևութաբանական դիտարկումներն իրականացվել են Երևանի մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայանում և օդերևութաբանական ցանցի 39 կայաններում: Ագրոօդերևութաբանական սպասարկումն իրականացվել է կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Հանրապետության պետական կառավարման մարմիններին, մարզպետարաններին, ֆերմային տնտեսություններին և տարբեր կազմակերպություններին տրվել է անհրաժեշտ տեղեկատվություն ագրոօդերևութաբանական պայմանների մասին:

Կազմվել են.

- Տասնօրյակային, ամսական (ձմռան ամիսներին), եռամսյակային ագրոօդերևութաբանական ամփոփ տեղեկատվություն,
- Դիտված անբարենպաստ ագրոօդերևութաբանուբանական պայմանների հետևանքների մասին տեղեկատվություն,
- Տեղեկանք աշնանացան ցորենի ցանքի, աճի և ձմեռման պայմանների վերաբերյալ:
- Տեղեկատվություն գյուղատնտեսական աշխատանքների ժամկետների մասին
- վաղահաս կարտոֆիլի ցանքի ժամկետների մասին,
- ջերմասեր մշակաբույսերի սածիլման ժամկետների մասին,

Կատարվել են՝

- աշնանացան ցորենի վնասվածություն գնահատում ձմռան ցրտերից(%),
- աշնանացան ցորենի վեգետացիայի վերսկսման պահին հողի խոնավության պաշարների գնահատում՝ մարտի 10-ի և 20-ի դրությամբ (0-20, 0-50 սմ շերտերում),

Կատարվել են կանխատեսումներ՝

- ծիրանենու ծաղկումն Արարատյան դաշտում
- Դեղձենու ծաղկումն Արարատյան դաշտում

Ագրոօդերևութաբանական կանխատեսումների արդարացման աստիճանը կազմել է.

- Ծիրանենու ծաղկում՝ 100%
- Դեղձենու ծաղկում՝ 100%
- Կատարվել է կայաններից ստացված ագրոօդերևութաբանական դիտարկումների տվյալների գրանցում, վերծանում և մշակում,
- Կատարվել է 1958թ. ագրոօդերևութաբանական տարեգրի մուտքագրում,
- Կատարվել է 2019-2020թթ ագրոօդերևութաբանական տարեգրերի տպագրում, կազմարարում:

1.5. Հիդրոլոգիական դիտարկումներ և կանխատեսումներ

Իրականացվել են ռեժիմային հիդրոլոգիական ուսումնասիրություններ 7 գետավազանի (Դեբեդ, Աղստև, Ախուրյան, Մեծամոր-Քասախ, Սևան-Հրազդան, Արփա, Հարավային) հիդրոլոգիական կայանների 82 գետային, 5 ջրամբարային և 4 լճային հիդրոլոգիական դիտակետերում: Սահմանված կարգով հիդրոլոգիական դիտակետերում իրականացվել են ջրի ելքի չափումներ, կատարվել են ջրի մակարդակի, ջրի և օդի ջերմաստիճանի, սառցային երևույթների դիտարկումներ:

Սևանա լճի 4 դիտակետերում կատարվել են ջրի մակարդակի, ջերմաստիճանի ամենօրյա 2 ժամկետային դիտարկումներ: Ստացված տեղեկատվությունն ամեն օր հաղորդվել է շահագրգիռ կազմակերպություններին:

Ամեն ամիս կազմվել է Սևանա լճի ջրային հաշվեկշիռը և տրամադրվել շահագրգիռ կազմակերպություններին, ինչպես նաև տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում տվյալները հրապարակվել են նաև «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում:

«Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի մշտադիտարկումների տվյալների միասնական էլեկտրոնային շտեմարան» համակարգ է մուտքագրվել 2021 թվականի 1-ին եռամսյակի հիդրոլոգիական մշտադիտարկումների նախատեսված տվյալները:

Ամեն օր 50 գետային, 5 ջրամբարային և 4 լճային հիդրոլոգիական դիտակետերից, ինչպես նաև Արփա-Սևան ջրատար-Ծովինար և Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցք-Գեղամավան դիտակետերից ստացվել է հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ տեղեկատվություն, որոնց հիման վրա կազմվել են ամենօրյա հիդրոլոգիական տեղեկագրեր և տրամադրվել շահագրգիռ կազմակերպություններին, ինչպես նաև տեղեկագրերը հրապարակվել են «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում:

Հաշվետու ժամանակաշրջանում Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ մուտք գործած ջրի ծավալը (այդ թվում ստորերկրյա ներհոսքը) կազմել է 32.057 մլն խոր.մ (31.03.2021թ.):

Իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ստացված գրությունների հիման վրա պատրաստվել և տրամադրվել է անհրաժեշտ հիդրոլոգիական տեղեկատվություն:

Սևանա լճի մակարդակը 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ կազմել է 1900.63 մ, որն անցյալ տարվա նույն օրվա համեմատությամբ բարձր է 18 սմ-ով, իսկ 2021 թվականի հունվարի 1-ի համեմատ բարձր է 11 սմ-ով:

Ջրամբարների ջրալցվածությունը 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ կազմել է. Արփիլիճ ջրամբարում՝ 33.4մլն.խոր.մ, Ախուրյանի ջրամբարում՝ 205մլն.խոր.մ, Ապարանի ջրամբարում՝ 25.6մլն.խոր.մ, Ազատի ջրամբարում՝ 37.3մլն.խոր.մ, Մարմարիկի ջրամբարում՝ 3.84մլն.խոր.մ:

2021 թվականի մարտի 29-ին կազմվել և պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին է ներկայացվել «ՀՀ գետերի 2021 թվականի գարնանային վարարումների տարրերի կանխատեսում» տեղեկագիրը:

1.6. Ռադիացիոն մոնիթորինգ

Հիդրոօդերևութաբանական ցանցի 34 (այդ թվում՝ 14 հենակետային) կայաններում ռադիոլոգիական իրավիճակի վերաբերյալ ամեն օր՝ Գրինվիչի ժամանակով ժամը 06.00 և 18.00 իրականացվել են գամմա ֆոնի չափումներ, երևանյան լաբորատորիայում՝ մթնոլորտից երկրի մակերևույթի վրա տեղացող ռադիոակտիվ փոշու խտության ամենօրյա չափումներ, օդերևութաբանական կայաններից բերված հողի նմուշների գումարային բետտա-ակտիվության չափումներ:

Կատարվել են ատոմակայանի շրջակայքից /Սևջրից/ բերված ջրի նմուշներում կոշտ մնացորդների գումարային բետտա-ակտիվության չափումներ:

Կազմվել են Երևան քաղաքի գամմա-ֆոնի ամենամսյա տեղեկագրեր, որոնք ներկայացվել են ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայություն:

Կատարված չափումների արդյունքներով Երևան քաղաքում և ՀԱԷԿ-ի 30-կմ գոտում գրանցված գամմա-ֆոնի արժեքները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում չեն գերազանցել թույլատրելի սահմանները: Հանրապետության տարածքից ընտրովի սկզբունքով վերցված հողի նմուշներում գումարային բետա-ակտիվությամբ աղտոտվածություն չի արձանագրվել:

1.7. Ռադիոլոկացիոն դիտարկումների իրականացում, մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքներ.

Հաշվետու եռամսյակի ընթացքում հակակարկտային ծառայության աշխատակիցների կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները:

Մաքրվել, ստուգվել և վերանորոգվել են՝ կոնսերվացված գազագեներատորային հակակարկտային կայանքներից ապամոնտաժված հանգույցները, կենտրոններում տեղադրված հեռակառավարման համակարգերը, ալեհավաքները, համակարգչային տեխնիկան, այլ սարքերն ու սարքավորումները:

Ստուգվել և վերանորոգվել են կայանքների գազամատակարարման համակարգերի հանգույցները, ի հայտ եկած գազի արտահոսքերը:

Համայնքային խափանված հակակարկտային կայանքներն աշխատանքային վիճակի բերելու համար մարզային հակակարկտային կենտրոնների կողմից համայնքներին պարբերաբար ցուցաբերվել է համապատասխան աջակցություն:

Իրականացվել են հակակարկտային կայանքերի գազագլանանոթների տեղափոխման, տեխզննման, վերանորոգման, դրոշմակնքման, լիցքավորման և վերաբաշխման աշխատանքներ:

Հակակարկտային ծառայության բոլոր մասնագետներն անցել են տեխնիկական անվտանգության կանոնների պլանային հրահանգավորում և ստուգարք:

Մարզային հակակարկտային կենտրոններում իրականացվել են անձնակազմի գիտելիքների և հմտությունների բարձրացմանն ուղղված մասնագիտական դասընթացներ:

Ընդհանուր առմամբ ապակոնսերվացվել են ՀՄԿ ՊՈԱԿ-ին պատկանող թվով 234, ինչպես նաև համայնքներին ու ֆիզիկական անձանց պատկանող հակակարկտային կայանքները, երկու ՄՌԼ-5 ռադիոլոկացիոն կայանները, ավտոնոմ սնուցման գեներատորները, օդերևութաբանական սարքերը, ռադիոկապի որոշ միջոցներն ու այլ սարքեր, սարքավորումները: Մարզերում տեղակայված շարժական կայանքները, պահպանության համար նախատեսված տարածքներից տեղափոխվել են ակտիվ ներգործության համապատասխան դիրքեր:

Կատարվել են ձմեռային պրոֆիլակտիկ աշխատանքների պլան ժամանակացույցով նախատեսված միջոցառումներ:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2.1. ՀՀ Մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգի իրականացում

2021թ. 1-ին եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգը (ջրի նմուշառում, դաշտային հետազոտություններ, ֆիզիկաքիմիական անալիզներ և որակի գնահատում) իրականացվել է հանրապետության ջրային օբյեկտների (գետերի, ջրամբարների, Որոտան-Արփա, Արփա-Սևան ջրատարների և Սևանա լճի) 144 դիտակետում: Ջրի նմուշներում դիտարկվել են ջրի որակի բնութագրական 40-60 ֆիզիկաքիմիական ցուցանիշ՝ հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ և հիդրոկենսաբանական ցուցանիշներ: Ընդհանուր առմամբ որոշվել է 5505 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների քանակ՝ 5500):

2.2. ՀՀ Բնակավայրերի օդային ավազանի որակի մոնիթորինգի իրականացում

2021թ. 1-ին եռամսյակում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության 10 բնակավայրում օդի նմուշառման երեք եղանակով՝ պասիվ, ակտիվ և ավտոմատ: Մթնոլորտային օդում ուսումնասիրվել են փոշու, փոշում մետաղների, ազոտի և ծծմբի երկօքսիդների ու գետնամերձ օզոնի պարունակությունները:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ և Ծաղկաձոր քաղաքներում մթնոլորտային օդի որակի դիտարկումներն իրականացվել են 15 ստացիոնար դիտակայանում՝ ակտիվ նմուշառման եղանակով: Պասիվ եղանակով նմուշառումներ իրականացվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան և Ծաղկաձոր քաղաքների 214 դիտակետում:

2021թ. 1-ին եռամսյակում ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի միջոցառումների շրջանակում որոշվել է 18800 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների քանակ՝ 18800):

2.3. Հողերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում

2021թ. 1-ին եռամսյակ ընթացքում հողերի աղտոտվածության մոնիթորինգ չի իրականացվել:

2.4. Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ (EMEP) ծրագրի շրջանակներում Հայաստանում օդի անդրսահմանային աղտոտման մոնիթորինգի իրականացում

2021թ. 1-ին եռամսյակում մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի Ամբերդի դիտակայանում իրականացվել է մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների մոնիթորինգ և որոշվել 675 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների նվազագույն քանակ՝ 675):

2.5. Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգի իրականացում

«Արաքս գետի ջրի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգի ծրագրի» շրջանակում Արաքս գետի հայ-իրանական սահմանային հատվածում իրականացվել է

Արաքս գետի ջրի և հատակային նստվածքների որակի մոնիթորինգ: 2021թ. 1-ին եռամսյակում որոշվել է Արաքս գետի ջրի և հատակային նստվածքի 0 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների քանակ՝ 0):

2.6. Շրջակա միջավայրի նախարարության աշխատակազմում և նրա առանձնացված ստորաբաժանումներում տեղային համակարգչային ցանցերի և համակարգչային տեխնիկայի ծրագրային, էլեկտրոնային փոստի և ինտերնետ կապի տեխնիկական սպասարկում, նախարարության պաշտոնական կայքի սպասարկում, ՀՄԿ ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի սպասարկում, օդի պահանջվող օգտագործում (ՕՊՕ) համակարգի սպասարկում

2021թ. 1-ին եռամսյակում իրականացվել է նախարարության տեղային համակարգչային ցանցերի սպասարկում, համակարգիչների վերանորոգում՝ ապահովելով համակարգչային տեխնիկայի, ինտերնետային կապի, էլեկտրոնային կապի, էլեկտրոնային փոստի, կայքի (http://env.am/) անխափան աշխատանքները: Ընդհանուր առմամբ սպասարկվել է շրջակա միջավայրի նախարարության 253 համակարգիչ, կայք և տեղային ցանց (նախատեսված ցուցանիշների քանակ՝ 253):
Սպասարկվել են ՀՄԿ ՊՈԱԿ-ի համակարգչային և տպագրական սարքերը:
Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում 2021թ. 1-ին եռամսյակում տեղադրվել են՝ լուրեր, հայտարարություններ, տեսահոլովակներ, բնապահպանական փորձաքննության նախագծեր, փորձաքննության եզրակացություններ, ՍԹԱ նախագծեր, ծառայողական քննության հրամաններ, մոնիթորինգի եռամսյակային և տարեկան տեղեկանքներ, ամենօրյա (աշխատանքային օրեր) ռեժիմով տեղադրվում է եղանակային կանխատեսումների, գետերի, լճերի և ջրամբարների վիճակի, Սևանա լճի վերաբերյալ տեղեկանքներ, նախարարության և համակարգի կառույցների աշխատակազմերի փոփոխություններն ըստ ստացված հրամանների, նախարարության թափուր հաստիքների պարբերական թարմացումներ, բնապահպանական ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի ցանկերի թարմացումներ «Օրենսդրություն» բաժնի համապատասխան ենթամենյուներում: Բացվել են նոր բաժիններ:

Կայքի համապատասխան էջերի թարմացումները և նյութերի եռալեզու թարգմանությունները կատարվել են ՀՀ Բնապահպանության նախարարի 02.10.2017թ. թիվ 338-Ա հրամանով հաստատված կարգի համաձայն:

Իրականացվել է «Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին» Ձև N2-տա (օդ) (տարեկան), «Ջրօգտագործման մասին» Ձև N2-տա (ջրտնտ) (տարեկան), «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» Ձև N 1-թափոն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունների 2019 թվականի տվյալների մուտքագրման համար բազաների նախապատրաստում: Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության համակարգիչների վրա տեղադրվել է «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» Ձև N1-թափոն ծրագիրը և բազան, կատարվել են համապատասխան կարգավորումները: Մթնոլորտային քաղաքականության վարչության համապատասխան համակարգչի վրա տեղադրվել է «Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին» Ձև N2-տա (օդ) բազան, կատարվել համապատասխան կարգավորումները և հաշվարկները:

Իրականացվել է մակերևութային և ստորերկրյա ջրերի, մթնոլորտային օդի մոնիթորինգի տվյալների ամփոփում, գնահատում և վերլուծություն, բազաների թարմացում, տվյալների սահմանված կարգով տրամադրում և հրապարակում: Շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքներն ամփոփվել են եռամսյակային տեղեկագրերի տեսքով, մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակը նաև բաշխման շաբաթական, ամսական ու

եռամսյակային քարտեզների, իսկ մակերևութային ջրերի որակը՝ ամսական և եռամսյակային քարտեզների տեսքով:

Սպասարկվել է «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի http://armmonitoring.am/ կայքը, կայքում ավելացվել են մի շարք էջեր, բաժիններ, ենթաբաժիններ, իրականացվել է կայքում տեղադրված նյութերի և մենյուների եռալեզու թարգմանություն:

Սպասարկվել է «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի ֆեյսբուքյան էջը, ավելացվել է էջում հրապարակվող նյութերի քանակը և որակը:

2.7. «Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի» (Օրհուս կենտրոնի) սպասարկում

2021թ. 1-ին եռամսյակում Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի (Երևանի Օրհուս կենտրոն) կողմից, հիմք ընդունելով Օրհուսի կոնվենցիայի դրույթները, իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- սեմինարների, բաց դասերի, քննարկումների կազմակերպում, աջակցություն հասարակական լսումների կազմակերպմանը և Օրհուսի կոնվենցիայի 2021թ. Ազգային զեկույցի պատրաստման գործընթացին,
- հասարակությանը տեղեկատվության տրամադրում, լուսաբանում և տարածում,
- գրադարանի և ֆիլմադարանի այցելուների սպասարկում, համագործակցություն բնապահպանական ոլորտի ՀԿ-ների և այլ կազմակերպությունների հետ,

Հաշվի առնելով կորոնավիրուսի համավարակը սեմինարները, քննարկումները և հասարակական լսումները հիմնականում կազմակերպվել են օնլայն հարթակներում:

2.8. Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի իրականացում

2021թ. 1-ին եռամսյակի ընթացքում ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգն իրականացվել է 6 ՋԿՏ-ում ընդգրկված 109 ստորերկրյա ջրաղբյուրներում: Ընդհանուր առմամբ որոշվել է 4306 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների թիվ՝ 4306), այդ թվում.

- ստորերկրյա ջրերի 65 դիտակետում (դրական և բացասական մակարդակով հորատանցքերում) 1170 մակարդակի (ճնշման) չափում՝ 6 անգամ հաճախականությամբ (նախատեսված չափումների թիվ՝ 1170): Չափումները կատարվել են Արարատյան, Գյումրիի և Սևանի միջլեռնային գոգավորությունների հորատանցքերում և ջրհորներում,
- ստորերկրյա ջրերի 64 դիտակետում՝ 43 բնաղբյուրում և միջլեռնային գոգավորությունների 21 շատրվանող հորատանցքում ծախսի 1152 չափում (նախատեսված չափումների թիվ՝ 1152),
- ստորերկրյա ջրերի 109 դիտակետում ջերմաստիճանի 1962 չափում (նախատեսված չափումների թիվ՝ 1962),
- ստորերկրյա ջրերի 22 դիտակետի շրջակայքում՝ հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք ուղղություններով 3կմ երկարությամբ տեղազննում (նախատեսված ցուցանիշների թիվ՝ 22):

Արդյունքում չեն բացահայտվել ստորերկրյա ջրերի որակի և քանակի վրա ազդող նոր տեխնածին գործոններ կամ հնարավոր աղտոտման օջախներ:

2.9. Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) ԿՕԱ ների մնացորդային քանակների մոնիթորինգի իրականացում, ռեեստրների և թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման միջոցառումներին աջակցության տրամադրում, Երկրորդային հումքի վերամշակման և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման միջազգային փորձի

ուսումնասիրում, վտանգավոր թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջների ուսումնասիրում

Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծմանն աջակցության նպատակով 2021թ. 1-ին եռամսյակում ուսումնասիրվել է թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման 6 օբյեկտներ և հեռացման վայրեր վայր (նախատեսված ցուցանիշների քանակ՝ 6): Ուսումնասիրվել է թափոնների օգտահանման, վնասազերծման 3 տեխնոլոգիա և երկրորդային հումքի վերամշակման 2 մեթոդ (նախատեսված ցուցանիշների քանակ՝ 5):

«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարմանն աջակցելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում նախատեսված էր իրականացնել նմուշառման ենթակա աղբավայրի ընտրություն և ուսումնասիրություն, որը կատարվել է:

3. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Անտառների մոնիթորինգի ծառայության կողմից անտառպահպանության և անտառխախտման արձանագրությունների ուսումնասիրություններ են իրականացվել թվով 2 ԲՀՊՏ-ների սահմաններում: Աշխատանքների արդյունքում ուսումնասիրվել են **«Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Շիկահող» պետական արգելոցի» և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի** աշխատակիցների կողմից կազմված 2 անտառխախտման արձանագրությունները, պահպանության աշխատանքների կազմակերպվածությունը, ուշադրություն է դարձվել անտառային հրդեհներին և հակահրդեհային անվտանգության պարտադիր միջոցառումների իրականացմանը և առկա մի շարք այլ հույժ կարևոր հիմնախնդիրներին:

«Facebook» սոցիալական ցանցում «Բնապահպանի տուն» ՀԿ-ի կողմից բարձրաձայնված խնդրի պարզաբանման նպատակով ԱՄԾ աշխատակիցները նույնպես իրենց մասնակցությունն են ունեցել մասնագիտական խմբի դաշտային ուսումնասիրությունների իրականացմանը՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի «Խնձորուտի» անտառպետության տարածքում:

Ծառայությունը հունվար-մարտ ամիսների ընթացքում իրականացրել է նաև փայտանյութի սպառման շուկայի ուսումնասիրություններ:

ԱՏՀ և ՀԶ տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվել են «Արծվաբերդի» անտառտնտեսության անտառածածկում 2016-2020 թվականների ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների դինամիկայի ուսումնասիրություններ, «Հրազդան», «Արծվաբերդ», «Եղեգնուտ», «Գուգարք» և «Նոյեմբերյան» անտառտնտեսություն մասնաճյուղերի անտառածածկում 2018-2019 թթ. և 2019-2020 թթ. ընթացքում տեղի ունեցած սաղարթի փոփոխությունների վերծանման աշխատանքներ, «Ստեփանավանի անտառտնտեսություն>» մասնաճյուղի «Ստեփանավանի» անտառպետության սահմաններում 2018-2019 թթ ընթացքում սաղարթում տեղի ունեցած փոփոխությունների վերլուծական աշխատանքներ և Սյունիքի, Կոտայքի, Վայոց Ձորի, Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում անտառածածկի վերհանման աշխատանքներ:

2021 թվականի առաջին եռամսյակում կազմակերպվել և իրականացվել է նաև «Անօդաչու թռչող սարքերը շրջակա միջավայրի մոնիթորինգում» դասընթացը:

ԱՄԾ աշխատակիցները վերոնշյալ եռամսյակում մասնակցել են նաև մի շարք աշխատաժողովների, դասընթացների և հանդիպումների:

Պլանատնտեսագիտական բաժնի պետ Գ.Մելքոնյան